

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս ՈՒԹ Ի Ի Ն

49) Ալժեռէղ դը Վինէի, Գերբուածնեւ, Թարգմ. Ա. Զօպանեան, Պարիզ, գինն է 1 ֆրանկ:

Ալֆրէդ դը Վինէին ֆրանսիական բօմանտիկ գրականութեան ամենահետաքրքիր գէմքերից մէկն է: Այս բանաստեղծ կոմսը՝ թէև բօմանական մթնոլորտի ծնունդ և իր հայրենակից նախորդներից բաւականին ազդուած՝ այնուամենայնիւ իր գեղարուեստական ընդհանուր խառնուածքով շատ մօտ է գերմանական բօմանտիկներին, մանաւանդ հանճարեղ Նօվալիսին: Նա «Կապույտ ծաղիկի» հաւատարիմ և իսկական երկրպագուններից է, միւս կողմից մաքուր, անապակ արուեստի լաւագոյն ջատագովը: Նրա նուրբ, խանդավառ հոգին չարունակ եթերային բարձունքներումն է սաւառնում. երկրաւորը, աշխարհայինը, նիւթեղէնը նրան շատ նուազ չափով է գրաւում: Այս պատճառով նրա թէ քնարերգական և թէ նոյնիսկ վիպական ու դրամատիկական գրուածքներից մի տեսակ հոգեղէն քնքշութեան չունչ է փչում:

Գ. Բրանդէս իրաւունք ունէր նկատելու, որ դը Վինէին մի ստոյիկեան է: Թէ ստօիցիզմը նա իր կեանքում ինչ չափով է գործ դրել, սա մենք մտադիր չենք քրքրել, բայց պէտք է խոստովանել, որ նա իբրև արուեստագէտ, վերին աստիճանի ողջախոհ է, մաքուր և նուրբ: Նրա ոճը չափազանց զրաւիչ է, պատկերաւոր և արտայայտիչ, լեզուն գեղեցիկ, զարդարուն, բայց ոչ արուեստական, երևակայութիւնը վառ և փարթամ, ինչպէս առհասարակ շատ բօմանտիկների:

Ալֆրէդ դը Վինէի առաւելութիւնը կայանում է նրա գեղարուեստական նրբութեան, զգայնութեան մէջ: Բայց այս առաւելութիւնը պատճառ է դառնում նաև մի խոշոր թերութեան—անընդունակ է դարձնում լուրջ պոքսիմներ, լայն հորիզոններ ընդգրկելու: Այս թերութեան վրայ անուղղակի կեր-

պով մատնանիչ է անում նաև պ. Զօպանեանը իր փոքրիկ յառաջարկներով:

Պ. Զօպանեանի գրքոյկը, որ կազմում է «Անահիտի» մատենադարանի II համարը, ամփոփում է միայն «Վինէի գեղեցկագոյն քերթուածներուն հայերէն թարգմանութիւնը»: Նա թարգմանել է հետեւեալ կտորները. «Մովսէս», «Աղէտքը», «Ճակատագիրները», «Հովիւին տունը», «Զիթենեաց լեռը», «Գայլին մահը»:

«Մովսէսը» խրոխտ չեղտով գրուած մի ոտանաւոր է, ուր Իսրայէլի մեծ մարգարէն Նիովային դէմ առ դէմ կանգնած պաղատում է. «Տէր, աւտդ, ես հզօր եմ և մենաւոր. թոյլ տուր, որ հողին քունը քնանամ»: Եւ Տէրը լսում է իր ծառայի ձայնը. «հզօր մենաւորը» վախճանւում է:

Յայտնի է, որ բօմանտիկները սովորաբար մի առանձին հակումն էին ցոյց տալիս դէպի կրօնական-միստիկ թեմաները: Այս առանձնայատկութիւնը նկատելի է մանաւանդ կաթողիկ բօմանտիկների մօտ, որոնց շարքին է պատկանում նաև դը Վինէին: Բացի «Մովսէսից» միստիկ տրամադրութեամբ են համակուած նաև «Ճակատագիրները» և «Զիթենեաց լեռը»:

«Հովիւին տունը» և «Գայլին մահը» ամփոփում են իրանց մէջ լուրջ խորհրդածութիւններ:

Ալֆրէդ դը Վինէի ճաշակը ըմբռնելու և նրա մասին փոքր ի շատէ գաղափար կազմելու համար արժէ կարդալ պ. Զօպանեանի թարգմանութիւնը, որ տեղի է ունեցել արձակ ոճով և որ ըստ ինքեան աջող կարող է համարուել: Մեզ թւում է, սակայն, որ ուսանայ ընթերցողների համար թարգմանութիւնը մի քիչ անմատչելի է, որովհետև ազատ չէ խորթութիւններից և փնտրուած քառերից—մի թերութիւն, որից թիւրքահայոց թէ ինքնուրոյն գրողների և թէ թարգմանիչների մի մասը դժբախտաբար զեռ թօթափած չէ:

Վ. Ն.

50) Վահան Թէֆէեան, Հոգեւ, Պարիզ, 1901 թ., գիտն է ?

Նքեղ տպուած այս գիրքը պարունակում է իր մէջ «ոտանաւոր և արձակ քերթուածներ», որոնց համարեա միակ նիւթը սէրն է, այն էլ հասցրած հեշտասիրութեան: Մի զգացմունքի այդչափ ծայրայեղ զարգացումը հիւանդ երեոյթ է. դա սիրամոլութիւն է (էրօտօմանիա): Գիշեր ու ցերեկ հեղինակը